Ե.

Կիսկիմ կամ Կիցկա:

Կիսկիմ գաւառն սկսում է երկու Հունտ-Հնուտ գետերի առ-ների ձորերից, երկարում է 40 կիլոմետր եւ վերջանում է Պալխար վտակի խառնունքի, Սակուտ եւ Ամզէտ առ-ների ձորերի մօտ: Այս հովիտը ձորոխի կենդրոնական մասն է կազմում, համեմա-տաբար ընդարձակ դաշտեր, սարահարթեր եւ ծայրէ ծայր մշակուած ագարակներ եւ հանդեր ունի, որոնք ոռոգուած են եղել մի ժամանակ ամբողջապէս, իսկ այժմ տեղ տեղ, քանի որ ջրանցքները վերջին ԺԵ-րդ եւ ԺԶ-րդ դարերում կործանուել եւ այլ եւս չեն վերանորոգուել: Կիսկիմ անունը առա-ջին անգամ յիշւում է Ասսուրա-Ուրարդա-կան շրջանների սկզբներում եւ շարունակում է գոյութիւնը մինչեւ այսօր: Կիցկան եղել է արքայական, Մալխասեան, Պարթեւ-Պահ-լաւական, Ամատունի, Սլկունի եւ ուրիշ շատ նախարարութիւնների Ոստանն-ամրոց, բերդ եւ գանձարան[1]. այս գաւառն եղել է պատսպարան եւ նեղուածները այստեղ կամ աւելի խորը-Պահլաւական, Պարթեւական, Մամիկոնեան կալուածներումն են ապաստան գտել միջին դարերում, երբ հալածուել են

---

[1] Սեպ. արձանագ. Սանդալճեանի, Վիեննա, 1901 թ. եւ ուրիշ տեղեր: